ՄԱՅՐ ԱԹՈՌ

Զատկական տօներն անցան ըստ սովորականին հանդիսաւոր կերպով։ Վեհափառ Հայրապետն Իւր ներկայութեամբ առանձին շուք էր տալիս Տաճարում աւագ տօների արարողութեանց։ Զատկական ս. պատարագն մատուցեց գեր. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսը։ Ս. Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետին և Զատկական տօնի առթիւ մատուցեց իւր որդիական շնորհաւորանքները ու բարեմաղթութիւնները, համբուրելով Հոգեւոր Տիրոջ ս. աջը։

Այդ օրը Վեհափառը բարեհաճեց ընդունել Ճեմարանի ուսուցչական խումբը գլխաւորութեամբ տեսուչ Տ. Բագրատ եպիսկոպոսի, Սինօդի պաշտօնեաներին, Վաղարշապատի ու շրջակայ գիւղերի ժողովրդոց ու տեղական ծառայողների ներկայացուցիչներին, որոնք և ստացան Վեհափառի օրհնութիւնը։

Զատկական տօնի առթիւ Վեհափառ Հայրապետը ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ Նորին Պայծառափայլութիւն Կովկասի Տ. Փոխարքայից, Կ. Պոլսի ամենապատիւ Տ. Զաւէն Պատրիարքից, Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի գեր. առաջնորդներից ու փոխանորդներից, թեմական դպրանոցի հոգաբարձութիւնից, այլ և այլ բարեգործական հաստատութիւններից, զանազան քաղաքների հայազգի ականաւոր անհատներից. և այլն։

Ապրիլի 7-ին Երևանից ս. Էջմիածին եկան փոխ-թեմակալ գեր. Տ. Խորէն եպիսկոպոսը, թեմական Դպրանոցի հոգաբարձական ամբողջ կազմը և պատուաւոր ներկայացուցիչներ քաղաքի կողմից, որոնք միասին բախտ ունեցան ներկայանալ Նորին Վեհափառութեան և Զատկական տօնի առթիւ մատուցանել իրենց որդիական զգացմունքները։

Միաժամանակ Երևանի հայ ժողովրդի կողմից նոքա խընդրեցին Վեհափառ Հայրապետին՝ բարեհաճել այցելել իրենց քաղաքը, քանի որ ժողովուրդն մեծ փափագ ունի տեսնել իւր սիրեցեալ Վեհափառ Հայրապետին։ Վեհափառ Կաթուղիկոսն բարեհաճեց յարգել ժողովրդի խնդիրն՝ այցելել ապրիլի 13-ին Երևանի ժողովրդոց, բայց 2 օրից յետոյ Վեհափառը ստանալով Թիֆլիսից իւր թանկագին քրոջ, Սոֆիա Սուրէնեանի, ցաւալի մահուան լուրը՝ ստիպուած եղաւ յետաձգել իւր այցելութիւնը Երևան։

Մայր Աթոռի միաբանութիւնը՝ լսելով Վեհափառ Հայրապետի քրոջ մահը՝ ի յարգանս իրենց Հոգևոր Տիրոջ՝ ապրիլի 12-ին՝ հանդուցեալի թաղման օրը, ժողովուեց Մայր Տաճար և յատուկ հանդիսաւոր պատարագից յետոյ, որ մատուցեց լուսարարապետ դեր. Տ. Ղևոնդ եպիսկոպոսը, կատարեց հոգեհանգիստ Միածնաէջ ս. սեղանի առաջ։ Որից յետոյ ամբողջ միաբանութիւնը գնաց Վեհարան և ներկայանալով իրենց Հոգևոր Տիրոջ՝ ցաւակցութիւն յայտնեց։ Հանգուցեալը ազնուական տոհմից էր և վերջին 10 տարին քաղաքի ունայնութիւնից հեռացել և ապրում էր իւր եղբայր գնդապետ Աղէքսանդր Սուրէնեանցի կալուածքում, Թիֆլիս քաղաքի Սաբուրթալայի Ախալշէն կոչուած մասում, որտեղ իւր չափազանց զգայուն սրտով առանձին հոգացողութիւն էր ցոյց տալիս դէպի իւր շրջակայ կարօտեալներն առանց ազգային խտրութեան։ Թիֆլիսում նորա թաղմանը ներկայ են եղել զանազան ազգութիւնների ներկայացուցիչները և համքարութիւնը։ Վեհափառ Հայրապետի կողմից ներկայացուցիչ է եղել թաղման ժամանակ Տ. Մատթէոս եպիսկոպոսը։ Իւր քրոջ մահուան առթիւ Վեհափառ Հայրապետն զանազան տեղերից ցաւակցական հեռագիրներ է ստանում։

Մբրկից վանաուածների օգտին Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ Սինոդն ուղարկել է Թիֆլիսի Ցանձնաժողովի Նախագահուհի Նորին Պայծառափայլութիւն

Կովկասի Տ. Փոխարքայի ամուսին Ելիսաւետա Անդրէեվնա Վարանցովա-Դաշկովային երկու հարիւր ռուբլի։

Մարտի 22-ին ս. Էջմիածին էր եկել Վանի Ֆրասխան հիւպատոս պ. Սանֆորդ, որ ներկայանալով Նորին Վեհափառութեան՝ նոյն օրն էլ մեկնեց դէպի Վան։

Իսկ 25-ին էլ Վանի ժանդարմերիայի պետ Ֆրանսիացի պ. Մարրասէն իւր կնոջ հետ, որ նոյնպէս ներկայանալով Նորին Վեհափառութեան ճանապարհուեցին Վան 27-ին։

Թէ հիւպատոս պ. Սանֆորդը և թէ պ. Մարրասէն իւր կնոջ հետ պատշաճ կերպով հիւրասիրուեցին Մ. Աթոռում։

Մարտի 29-ին Օշական պատմական գիւղի Նոր Դպրոցի հիմքի օրհնութիւնը կատարուեց մեծ շուքով մասնակցութեամբ փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի, Տ. Բագրատ եպիսկոպոսի և Տ. Բաբգէն վարդապետի։ Վեհափառ Հայրապետի կողմից ներկայացուցիչ էր նշանակուած Տ. Բագրատ եպիսկոպոսն, որն ս. Մեսրոպի եկեղեցում ս. պատարագից յետոյ Վեհափառի կողմից օրհնեց ժողովրդեան և քաջալերեց իրենց ձեռնարկած գեղեցիկ գործի համար։ Իսկ հիմքի օրհնութեան ժամանակ խօսեց Տ. Խորէն եպիսկոպոսն՝ յայտնելով՝ որ վերջապէս կիրականանայ այն մեծ ցանկութիւնը, որ վաղուց ամենքս սպասում էինք տեսնել ս. Մեսրոպի դամբարանի մօտ մի յարմարաւոր պատշաճ դպրոցական գեղեցիկ շինութիւն։ Հանդիսին ներկայ էին ժողովրդոց մեծ բազմութիւն և այլ պատուաւոր ներկայացուցիչներ։ Նախատեսուած է նոր շինութեան համար ծախսել մինչև 20 հազար ռուբլի, որից 8 հազարն հոգացել է տեղական ժողովուրդը, իսկ մնացածն յոյս ունեն ստանալ դրսից։

Ապրիլի 9-ին ս. Էջմիածին եկան Թիֆլիսի օրիորդաց Յովնանեան դպրանոցի բարձր դասարանի աշակերտուհիները թուով 44 հոգի, առաջնորդութեամբ նոյն դպրանոցի տեսուչ պ. Ս. Մալխասեանի և բժիշկ պ. Բ. Աղասարեանի, ուսուցիչ պ. Մուսայէլեանի և այլոց, Մ. Աթոռում Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ հիւրասիրուեցին

4 օր։ Ամսի 10-ին ներկայացան Վեհափառ Հայրապետին և համբուրեցին ս. աջը։ Վեհափառն օրհնեց բոլոր աշակերտուհիներին ու իրենց առաջնորդներին։ Էջմիածնից ամսի 11-ին ճանապարհուեցին Օշական ս. Մեսրոպի գերեզմանը համբուրելու՝ որտեղ հիւրասիրուեցին տեղական քահանայ Տ. Մամբրէի տանը, և ապա մեկնեցին Աշտարակ գիւղը՝ տեսնելու Ներսէս Ե-րդ կաթուղիկոսի, Շահազիզի և Պ. Պոշեանի գեղեցիկ հայրենիքը։ Մոգնու ս. Գէորգ վանքը ևս տեսան, և նոյն օրը վերադարձան Մայր Աթոռ։ Թէ Մայր Աթոռի և թէ Արարատեան դաշտի, Օշականի, Աշտարակի պատմական վայրերին ծանօթացնում ու սրանց առաջնորդում էին Տ. Կարապետ եպիսկոպոսն և Տ. Բարգէն վարդապետն։ Ապրիլի 10-ին երեկոյեան Ճեմարանի աշակերտներն ի յարգանս իրենց քոյրերի կազմել էին զրական երաժշտական երեկոյթ, որին մասնակցեցին աշակերտուհիներն ևս իրենց երգով ու նուագածութեամբ։ Երեկոյթը քաղցր տպաւորութիւն թողեց բոլորի վրայ։

Ապրիլի 12-ին աշակերտուհիները մեկնեցին Թիֆլիս՝ Արարատեան դաշտի պատմական վայրերից ու Մայր Աթոռից տանելով ամենաքաղցր յիշողութիւններ։ Անշուշտ դպրոցի վարչութեան կողմից մի գեղեցիկ կարգադրութիւն էր այդ՝ բերել իւր սանուհիներին և ծանօթացնել Արարատեան երկրի պատմական վայրերին։ Ցանկալի է՝ որ ուրիշ դպրոցների վարչութիւններն ևս հետևէին այդ օգտակար օրինակին։

Ապրիլի 20-ին Մայր Տաճարում հանդիսաւոր ս. պատարագից յետոյ ներկայութեամբ Վեհափառ Կաթուղիկոսի, միաբանութեան և ժողովրդի հոգեհանգստեան կարգ կատարուեց բարերար հանգուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի համար մահուան երրորդ տարեդարձի առթիւ։

Բ. վ. Ա.